«ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԵՏ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ԵՎ «ԳԱՎԱՌԻ ՄԱՆԿԱՏՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«_____»_____ 2025 ԹՎԱԿԱՆԻ N_____Ա

«ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԵՏ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ԵՎ «ԳԱՎԱՌԻ ՄԱՆԿԱՏՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ

ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 67-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «զ» կետով և 25-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով 2025 թվականի մայիսի 10-ից լուծարել «Գավառի մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) (պետական գրանցման ամսաթիվը 28.02.2002թ., համար՝ 25.210.00914, հասցեն՝ Ալեքսանդր Ղամարյան փ./S/27/18, Գավառ 1201, Գեղարքունիք):
2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝ 15 օրյա ժամկետում ապահովել Կազմակերպության լուծարման աշխատանքներն իրականացնելու նպատակով լուծարման հանձնաժողովի ստեղծումը՝ դրա կազմում ընդգրկելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության (մեկ անդամ), Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության (մեկ անդամ), Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (մեկ անդամ), Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի (երկու անդամ՝ հանձնաժողովի նախագահ և անդամ-քարտուղար),

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի (մեկ անդամ) և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմից (մեկական անդամ) ներկայացուցիչներին։

3. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝

- պետական բյուջեում վերաբաշխում կատարելուց հետո երկշաբաթյա ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել հուշագիր և դրամաշնորհի պայմանագիր «ՍՕՍ-Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի հետ՝ հինգ տարի ժամկետով՝ Կազմակերպությունում խնամվող երեխաների խնամքն ու դաստիարակությունն ապահովելու նպատակով և ապահովել Կազմակերպությունում խնամվող երեխաների վերաուղեգրումը ու տեղափոխումը «ՍՕՍ-Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի Կոտայքի մասնաճյուղ, երեխաների անձնական գործերի հանձնումը «ՍՕՍ-Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամին։ Դրամաշնորհի պայմանագրում անհրաժեշտ է սահմանել, որ

ա.պայմանագրի գումարը սահմանվում է յուրաքանչյուր տարի պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների չափով.

բ.«ՍՕՍ-Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի համար դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում անհրաժեշտ աշխատանքների, ծառայությունների և ապրանքների ձեռքբերման համար «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը և դրանից բխող օրենսդրությունը կիրառելի չեն.

- լուծարման հանձնաժողովի ստեղծումից հետո մեկամսյա ժամկետում ապահովել Կազմակերպության համապատասխան փաստաթղթերի և գույքի, այդ թվում՝ դրամական միջոցների և գույքային իրավունքների հանձնումը լուծարման հանձնաժողովին.
- հաստատել լուծարման հանձնաժողովի կողմից կազմված լուծարման հաշվեկշիռը.
- լուծարման աշխատանքներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով ապահովել Կազմակերպության գործունեության դադարեցման պետական գրանցման համար անհրաժեշտ միջոցները։

4. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝

- ապահովել լուծարման հանձնաժողովի աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացումը՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից տրամադրված առաջարկները։

5. Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին մինչև լուծարման գործընթացի ավարտը՝

- լուծել Կազմակերպության հետ կնքված 08.11.2019թ. թիվ 130/0019 և 23.07.2024թ. կնքված թիվ 29/0024 պայմանագրերով Կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով անշարժ գույք ամրացնելու մասին պայմանագրերը.
- «Հանրակացարաններ» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ կնքել՝ ՀՀ, Գեղարքունիք մարզ, համայնք Գավառ, ք.Գավառ, Ռ. Թորգոմյան փողոց, թիվ 5 շենք հասցեում գտնվող 2021.7 քմ և 1115.0 քմ մակերեսներով մասնաշենքերը, 6 քմ մակերեսով պահեստը, 74.4 քմ մակերեսով կաթսայատունը, 91 քմ մակերեսով լվացքատունը, 6.4 քմ մակերեսով պահակատունը և ՀՀ, Գեղարքունիք մարզ, համայնք Գավառ, ք. Գավառ, Գ.Նարեկացու փողոց 3 հասցեում գտնվող 0.431 հա մակերեսով հողամասը, 43.28 քմ մակերեսով սրճարանը, 6.67 քմ մակերեսով պահեստը, 77.49 քմ մակերեսով սրճարանը, 10.41 քմ մակերեսով պահեստը, 57.67քմ մակերեսով խոհանոցը, 40.3 քմ մակերեսով պոմպակայանը, 63.6քմ մակերեսով ջրավազանը, 18քմ մակերեսով պահեստը, 61.15քմ ծածկը, 26քմ, 13 խ.մ. մակերեսով պարիսպը, 32.2քմ մակերեսով հարթակը, 75.2քմ, 112.8 խ.մ. մակերեսով պարիսպը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրման մասին պայմանագրեր՝ որպես սոցիալական բնակարանային ֆոնդ օգտագործելու նպատակով։

6. Լուծարման գործընթացի ավարտից հետո պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած Կազմակերպության շարժական գույքը ամրացնել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը՝ խնամքի կամ կացարանով ապահովման ոլորտին ուղղված պետական ծրագրերի իրականացման ապահովման նպատակով, իսկ նշված գործընթացից հետո ավել մնացած գույքը նվիրաբերել համայնքների ղեկավարների աշխատակազմերին՝ համայնքներում բնակվող սոցիալապես անապահով ընտանիքներին նվիրաբերելու նպատակով։
7. Սահմանել, որ Կազմակերպության պարտատերերի հետ հաշվարկներն ավարտելուց հետո դեբիտորական պարտքերի ստացման և այլ պահանջների իրավունքները վերապահվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը, իսկ մնացած դրամական միջոցները փոխանցվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե։